աջը չհամբուրէ եւ նրա օրհնութիւնը չառնէ: Նա նստում էր գրակալի մօտ, բաց էր անում գիրքը, կարդում էր եւ պատմում էր նրա միտքը: Ես մինչեւ այսօր չեմ մոռացել մի քանի բանէր, որ այն ժամանակ սովորեցայ սուրբերի, ճգնաւորների, աբեղաների հրաշագործութիւնների մասին, թէ ինչպէ՛ս նրանք խորոված աղաւնիներ էին թռցնում, ինչպէ՛ս հրեշտակների հետ էին խօսում, ինչպէ՛ս դեւերին բռնում էին եւ իրանց սպասաւորութիւն էին անել տալիս, կամ ինչպէ՛ս շաբաթներով ոչինչ չէին ուտում, բայց աստուած նրանց համար երկնքից մանանայ էր ուղարկում: — Ո՞վ է իմանում, հազար ու մէկ այսպիսի բաներ էի լսում, որոնք լցնում էին իմ սիրտը մի սրբազան ջերմեռանդութեամբ, եւ ես մտածում էի. — «թող տամ այս փուչ աշխարհը, գնամ սարերը, մտնեմ քարերի մէջ, ճգնաւոր դառնամ, որ ես էլ հրեշտակների հետ խօսեմ. որ ես էլ երկնի մանանայով կերակրուեմ»...

Երբեմն ծերունիներից ոմանք առաջարկում էին վարժապետիս խորին աստուածաբանական հարցեր: Նա բոլորի պատասխանը խիստ խելացի կերպով տալիս էր...

Զ. ԴՊՐՈՑ

Մեր դպրոցը տէր Թոդիկի աւելորդ սենեակներից մէկն էր, անասունների ախոռին շատ մօտ եւ համարեա կպած նրա հետ: Այն նեղ եւ խեղդուած խուցի մէջ լցուած էին թոով մինչեւ քառասուն աշակերտներ. բացի աշակերտներից, այնտեղ կապած էին տէր հօր նորածին հորթերից երեքը: Ձմեռը շատ լաւ էր այնտեղ, թէեւ վառելիք չունէինք, բայց ախոռից դասատան մէջ ծակուած պատուհանները բաց էին անում եւ ջերմ գոլը մառախուղի պէս ներս էր թափւում, մեր դասատունը դառնում էր տաք, որպէս բաղնիք: Որքա՞ն ուրախանում էինք մենք... Թէեւ անասունների շնչառութիւնից գոլորշիացած ջերմութիւնը խեղդելու չափ ծանր էր: Ամառը շատ վատ էր այնտեղ, որովհետեւ ախոռի մէջ գտնուած անմաքրութիւնների խմորոելուց՝ մի կողմից փչում էր անախորժ գարշահոտութիւն, միւս կողմից, գոյեանում էին զանազան տեսակ զեռուններ, որոնք լոերի հետ խումբեր կազմելով, ահագին բազմութեամբ արշաւանք էին գործում դէպի մեր դասատունը: Նրանք այնքան մանր էին, որ աչքը հազիւ էր տեսնում, բայց որպէ՛ս սարսափելի կերպով խայթում էին, — այդ միայն աստուած գիտէ:

Ամբողջ դպրոցը բաղկացած էր մէկ դասատնից. նրա միջումն էին աւանդւում թէ բարձր եւ թէ տարրական գիտութիւնները, սկսեալ այբբենարանից, մինչեւ այն ահագին գիրքը, որ ես հազիւ էի կարողանում մինչեւ ժա-